Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 16

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2026թ. հոկտեմբերի 26-ի նիստի

ք. Երևան	սկիզբ՝ 26 հոկտեմբերի 2026թ., ժ. 14:35
	ավարտ՝ ժ. 16:06

Մասնակցում էին՝ Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհրդի) 11 անդամներից 9-ը:

Բացակայում էին՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանը և ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարի տեղակալ Լ. Քոչարյանը:

ՀՀ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Ա. Հարությունյանի փոխարեն մասնակցում էր Ն. Տիտիզյանը, իսկ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոռեկտոր Հ. Ծպնեցյանի փոխարեն՝ Ա. Պետրոսյանը:

Հրավիրված էին.

ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Վիճակագրության պետական խորհրդի անդամներ Վ. Արևշատյանը, Լ. Պետրոսյանը, Ն. Բաղդասարյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Լ. Մելիքյանը, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Հանրային խորհրդի քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2027 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծ
2. Այլ հարցեր:

Նիստը վարում էր Հանրային խորհրդի նախագահ Ա. Անանյանը:
Բացման խոսքով հանդես եկավ պարոն Ա. Անանյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 9 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահի պարոն Ս. Մնացականյանը համառոտ ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության 2027 թվականի վիճակագրական ծրագրի» (Ծրագրի) նախագիծը:

Պարոն Մնացականյանը նշեց, որ վիճակագրական տեղեկություն օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով՝ Ծրագրի նախագիծն առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով Արմստատի պաշտոնական կայքի Գլխավոր էջի Նորություններ բաժնում զետեղվել էր 15.06.2026թ.-ին, ինչպես նաև կարծիքի էր ներկայացվել ընտրանքային կարգով ընտրված հիմնական վիճակագրական տեղեկության 124 օգտագործողների (պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, դատաիրավական մարմիններ, բանկային համակարգ, գործարար շրջաններ, հասարակական ու միջազգային կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ և այլն):

Ծրագրի նախագծի առնչությամբ պատասխան-գրություններ ստացվել էին 57-ից կամ նրանց 46 %-ից: Ընդ որում, պատասխան-գրությունների մեջ.

- առաջարկություններ և դիտողություններ ներկայացրել էին 27 վիճակագրական տեղեկություն օգտագործողներ կամ նրանց 47 %-ը,
- առաջարկություններ և դիտողություններ չէին ներկայացրել 30 վիճակագրական տեղեկություն օգտագործողներ կամ նրանց 53 %-ը:

Ի լրումն վերոնշյալի, Արմստատը 12.10.2026թ.-ին ՎԿ/2-18/4140-2026 գրությամբ «2027 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը և «2027 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» **ամփոփաթերթն** առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով կարծիքի էր ներկայացրել նաև Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի անդամներին:

Առաջարկություններ էին ներկայացվել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կողմից:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2027 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝ «Այլ հարցերի» շրջանակում.

Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը պատասխանեց Հանրային խորհրդի անդամներ Ա. Մանուկյանի և Ա. Հայրապետյանի հարցերին:

Հանրային խորհրդի անդամ Ա. Մանուկյանն առաջարկեց տրամադրել վիճակագրություն Ծրագրի նախագծի վերաբերյալ կատարված առաջարկությունների և դիտողությունների ընդունման և չընդունման վերաբերյալ:

Առաջարկն ընդունվեց:

Արմստատն իր պատրաստակամությունը հայտնեց նաև մասնակցելու Հանրային խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերի քննարկումներին ոչ միայն Հանրային խորհրդի նիստերի ընթացքում, այլ ցանկացած ժամանակ և առաջարկվող ձևաչափով:

Նիստի եզրափակիչ խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

30.10.2026թ.

Հանրային խորհրդի նախագահ՝ Ա. Անանյան